ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Շ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
/էլ. փոստ՝ foi@foi.am/

Ի պատասխան Ձեր 22.10.2024թ. թիվ 1291291 հարցմանը՝

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ձեզ եմ ներկայացնում հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը:

Հարցման 1-ին և 2-րդ կետերի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից տնօրինվող/գործարկվող առցանց հարթակներն են՝

1. Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջ՝ lori.mtad.am, հարթակը գործարկվել է 2011թ. հունվարից, հարթակի դիզայնը թարմացվել է 2023թ., նոր բաժին է ստեղծվել 2024թ. սեպտեմբերին/, հարթակի բովանդակության ստեղծմամբ զբաղվում են մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները /ըստ անհրաժեշտության/, առցանց հարթակում տեղեկատվության ավելացումը կամ փոփոխությունն իրականացվում է զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի աշխատակիցների կողմից:
2. Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ՝ https://hartak.cso.gov.am, ադմինիստրատիվ աշխատանքներով զբաղվում են անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության աշխատակիցները:
3. Թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվական հարթակ՝ https://e-work.am, հարթակի ադմինիստրատորն է մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, աշխատանքներն իրականացվում են անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի կողմից:
4. Հայտարարությունների տեղադրման հարթակ՝ https://www.azdarar.am, հայտարարությունները տեղադրվում են անձնակազմի կառավարման բաժնի պետի կողմից:
5. Բարձրլեռնային և սահմանամերձ համայնքների ուսուցիչների գործուղման էլեկտրոնային համակարգ՝ https://kadrer.emis.am/#/, գործարկվել է 2021թ. ապրիլից, առցանց հարթակում ներկայացվող տվյալները կարող են ավելացվել կամ փոփոխվել մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից:
6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից օգտագործվում է ՀՀ ֆինանսների նախարարության «Client-TREASURY» ծրագիրը: Ակտիվ հղումը՝ https://clienttreasury.minfin.a, հարթակը գործարկվել է 2013թ.-ին: Հարթակի բովանդակության ստեղծմամբ զբաղվում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Կատ. Ա.Բաղդասարյան
Հեռ. /0322/ 2-53-25

Հարթակում ներկայացվող տվյալները կարող է ավելացնել կամ փոխել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

7. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից օգտագործվում է նաև ՊԵԿ-ի «Tax Forms» հաշվետվությունների ներկայացման հարթակը: Ակտիվ հղումը՝ https://file-online.taxservice.am/pages/loginPage.jsf, Հարթակը գործարկվել է 2018թ.-ին: Հարթակի բովանդակության ստեղծմամբ զբաղվում է ՊԵԿ-ը, Հարթակում ներկայացվող տվյալները կարող է ավելացնել կամ փոփոխել ՊԵԿ-ը:
8. Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից օգտագործվում է Mulberry 2.0 ծրագիրը, որն գործարկվել է 2011թ. ապրիլին, վերջին անգամ վերազինվել է 2019թ. փետրվարին, ծրագրի ադմինիստրատոր է հանդիսանում առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետը, ում կողմից էլ ծրագրում կատարվում են ավելացումներ և փոփոխություններ:

Հարցման 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի վերաբերյալ տեղեկացնում ենք.

3. Լոռու մարզպետի աշխատակազմն ունի ֆեյսբուքյան և յութուբյան էջեր: Հղումները հետևյալն են՝ https://www.facebook.com/RAStaffofLoriMarzpet ,

https://www.youtube.com/@%D4%BC%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%BA%D5%A5%D5%BF%D5%AB%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4 :

Լոռու մարզպետի աշխատակազմը մամլո քարտուղար չունի: Լոռու մարզպետը պաշտոնական էջ ևս չունի:

4. 4.1 Լոռու մարզպետի աշխատակազմի Ֆեյսբուք և Յութուբ սոցիալական էջերի բովանդակության ստեղծմամբ զբաղվում է Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունը:

4.2 Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության մասնագետները կարող են ավելացնել կամ փոփոխել էջում ներկայացվող տեղեկատվությունը:

4.3 Էջն ունի 3 ադմինիստրատոր:

4.4 Մարզպետը և մարզպետի տեղակալները ընդգրկված չեն էջի ադմինիստրատորների ցանկում:

5. Լոռու մարզպետի աշխատակազմը չի օգտվում վճարովի գովազդի ծառայություններից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-10-24 15:03:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ. Ա.Բաղդասարյան
Հեռ. /0322/ 2-53-25